

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարադաղաքայի գիմում են ուղղակի
Խմբագր. Редакция „Миръ“

ՄԵԼԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայերը Անդրկովկասում.— Եւրոպայի տեսչութիւնը: Նախկին Մոսկովայից: Ներքին լուրեր: Արտաքին տեսչութիւնը: Թիֆլիս: Արտաքին լուրեր: «Մշակի» հեռագիրներ: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց: Ֆելիետոն:

ՀԱՅԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Հատ անգամ հայերին համեմատում էին հրէաների հետ: Հայերը, ասում են, նոյն ձգտումներ ունեն ինչ որ հրէաները՝ նրանք չեն սիրում երկրագործութիւնը և միշտ ձգտում են դէպի վաճառականութիւն, կամ աւելի լաւ է ասել՝ դէպի մանր աւաճառութիւն:

Եւրոպացիները մենք արդար չենք գտնում: Հայերը սաստիկ սիրում են երկրագործութիւնը և միշտ հաւատարիմ են մնում երկրագործական պարագմունքի կողման, եթէ մի որ և է զօրեղ պատճառ չէ ստիպում նրանց թողնել իրանց այդ սիրած պարագմունքը:

Հրէաները երբեք երկրագործական ազգ չեն եղել. այդ մեղքոյց է տալիս նրանց պատմութիւնը: Հրէաները իրանց անկա-

խութեան ժամանակն էլ ատում էին երկրագործութիւնը. նրանք հովիւների ազգ էին, նրանք պարագում էին խաշնարածութեամբ:

Հին հայերը, ընդհակառակն, բուն երկրագործական ազգ էին:

Հասարակական անաշուղ հանգամանքները միայն կարող էին ստիպել հայերին թողնել երկրագործութիւնը և ձգտել դէպի այլ պարագմունքներ:

Հասկանալի է, օրինակ, որ թիւրքիայում հայ երկրագործը անապահով դրութեան մէջ գտնվելով մահմետական տարրի աւազակութիւնների կողմից նախազատում է քաղաքում ապրել, քան թէ շարունակել երկրագործութեամբ պարագել....

Անդրկովկասում հայ երկրագործական ազգաբնակչութիւնը վերջին ժամանակները սաստիկ բազմացել է: Մի կողմից, որտեղ հայերը բնակվում են չըխառնված ուրիշ ազգաբնակչութեան հետ, նրանք շատ աշուղութեամբ պարագում են երկրագործութեամբ, թէև շատ տեղ սաստիկ բազմանալու պատճառով հողերը սկսել են պակասել նրանց:

Իսկ որտեղ հայը գետնոված է

խառն ուրիշ ազգաբնակչութեան հետ, օրինակ թուրք տարրի հետ, նա այնքան աշուղութեամբ չէ կարող պարագել երկրագործութեամբ:

Մեր Անդրկովկասեան թուրք ազգաբնակչութիւնը դժբաղդապէս մնում է սերունդից սերունդ խորին տգիտութեան մէջ: Մեր թուրքերը չունեն ոչ ժողովրդական ուսումնարաններ, ոչ լրագրութիւն, վերջապէս ոչ մի կրթութիւնական ներգործութեան չեն ենթարկվում:

Եթէ իրանք չեն հոգում իրանց մասին, պէտք է որ ուրիշները, աւելի քաղաքակիրթ հարևան ազգութիւնները նրանց մասին հոգան:

Ով որ ուրիշ մասին է հոգում, իր մասին էլ է հոգում:

Անդրկովկասեան հայերի օգուտն է պահանջում որ աշխատեն ոչ միմիայն իրանց շրջանի մէջ, բայց և թուրք շրջանի մէջ ուսում տարածելու: Հարկաւոր է նախ և առաջ աշխատել գրասել մեր թուրք երեսաներին դէպի հայոց ուսումնարանները:

Դորանով անդրկովկասեան հայերը օգուտ կը բերեն թէ իրանց,

թէ իրանց հարևան մահմետական տարրին և թէ վերջապէս ամբողջ պետութեանը, տարածելով լոյս և կրթութիւն դարերով տգիտութեան մէջ մնացած թուրք ազգաբնակչութեան մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

4 հոկտեմբերի

Սեպտեմբերի 20-ին Ս. Պետերբուրգից եկաւ Մոսկվա հաճախող հայերի պատգամաւոր Խորէն արքեպիսկոպոս Լուսինեանը, ուղևորվելով դէպի Վ. Պոլս: Այս երկրորդ անգամ է, որ զերպատու սրբազանը այցելում է Մոսկվայի հայ հասարակութիւնը տասն և մէկ տարվան ընթացքում. (առաջին անգամը նա եկել էր 1867 թ. Վեհափառ կաթողիկոսի հետ Պետերբուրգ գնալու ժամանակ): Հասնելով Մոսկվա, սրբազան արքեպիսկոպոսը մտադիր էր երկու օրից յետոյ ճանապարհ ընկնել դէպի Օդեսա. բայց հայ հասարակութիւնը իմանալով այս դիտարկութեան մասին, խնդրեց նորին սրբազանութեանը մնալ գոնէ միշտ առաջիկայ կիրակին: Եւ այս այն նպատակով, որ այդ օրը զուցէ սրբազան հայրը քարոզ ասէ եկեղեցում, քարոզ, որին անհամբեր սպասում էր ժողովուրդը: Վերջապէս ժամանեց կիրակին. ժողովուրդը խուռն բազմութեամբ դիմում էր եկեղեցին, ուր ամենին փառաւոր հանդէս էր նպաստում. մանաւանդ, որ բացի քարոզից—այդ օրվան պատարագին ևս զերպատու արքեպիսկոպոսն էր: Պատարագից յետոյ, որ շատ հանդիսաւոր կատարվեցաւ, սրբազան հայրը խօսեց մի գեղեցիկ և ազգու քարոզ հաճախող հայերի

ՖԵԼԻԵՏՈՆ

Խմբագրի հրամանը:— Գլուխ աշխատանքին անդրդուակ է:— Ներքին պակասութիւնը:— Ֆելիետոնը միշտ չէ կարող ծիծաղեցնել:— Թիֆլիսի Կոմսոն:— Բնակչության խոսակցութիւնը:— Կիպլանի և իշխան Եղգոն թումանով:— Հայր յատկութիւնը:— Պաշտօնի մէջ և պաշտօնից դուրս:— Պ. Բարխուդարեանց:— «Մշակի» դէմ գրած յղուածները և խմբագրութեանը ուղղված անանուն նամակները:— Գրիգոր Տէր-Մէլքիսեդէկեան:— «Թաշող միտք» բրոշյուրը, և նրա նշանակութիւնը գիտութեան համար:— Ինչպէս են վարվում խելագարները:— Կրկին հայր յատկութիւնները:— Աւագակների վարմունքի ձևը:— Ամենք իւրաքանչիւրի դէմ և իւրաքանչիւր ամենքի դէմ:— Ժրատ տանտիկներ և փոսած խնձորները:— Մի հանձնարի միտք:— Հայաստան և իրմանիս:— Ինչի հայոց խնդիրը չաջողվեցաւ:— Տասն ու վեց և վաթսուն ու մէկ:— Կրթութիւնը:— Բարեկամիս ոտանաւորը:— Իմ վերջին խօսքը:

— Պ. Ասիացի, այս չարթվայ համար հարկաւոր է անպատճառ մի ֆելիետոն, ասեց երէկ խմբագիրը դիմելով ինձ:

— Կը գրեմ, պ. խմբագիր, եթէ ապատճառ հարկաւոր է, պատասխանեցի ես, բայց ճշմարիտն ասեմ ձեզ, գլխումս բան չը կայ: Եւ ճշմարիտն օր թէ միայն գլխումս ոչինչ չը կայ, բայց և առհասարակ ոչինչ նիւթ չը կայ, որից կարողանայի օգուտ քաղել:

Իմ վերջին ֆելիետոնից յետոյ, որին (փակագծում յիշելով) բարեկամներիցս ոմանք, որոնց դատողութիւնը ինձ թանգ է, շատ աջողված գտան, առանձին ոչինչ չէ պատահել, որ արժանի լինէր յիշելու:

Ներկայ ֆելիետոնս զանազան աննշան երեւոյթների մասին գրած մի կարկառած յօդուած կը լինի:

Հասերը այն համոզմունք ունեն կազմված, որ ֆելիետոնիստը պէտք է ծաղրածու լինի, որ ֆելիետոնը պէտք է անպատճառ ծիծաղեցնէ ընթերցողին. Բայց ինչ պէտք է անի ֆելիետոնիստը, երբ տխուր է, երբ ինքն ծիծաղելու և ուրիշներին ծիծաղեցնելու չնորհ չունի, երբ վատ է տրամադրված... երբ զղված է իրան չըջապատող հասարակութենից....

Ինչ պէտք է անի ֆելիետոնիստը, երբ ապրում է ոչ թէ ծիծաղելի, այլ զղվելի յատկութիւններ ունեցող հասարակութեան մէջ, ինչպէս է, օրինակ, մեր հայոց հասարակութիւնը....

Նախընթաց ֆելիետոններիցս մինի մէջ ես խօսեցի հայոց յատկութիւնների մասին,—բայց միթէ կարծում էք որ մեր ազգի բոլոր վատ յատկութիւնները յիշեցի: Ոչ, դեռ էլի շատ կան, որոնց մասին մարդը հեղձնտէ մտաբերում է:

Մեր Թիֆլիսի Կոմսոնի ճայնաւորների ծառայութեան ժամանակամիջոցը շուտով լրանում է: Հետագայ պէտք է կատարվեն նոր ընտրութիւնները:

Եւ ասա մեր քաղաքայիները սկսում են խօ-

սել, գտնել, վիճաբանել թէ ում հարկաւոր է ընտրել քաղաքագլուխ....

— Էն ուսում առաձներին էլ չինք ընտրի, էն իւրիտներին էլ միմիայն չինք տայ.... Նրանք ինչ մարդիկ են.... Խօսելով լաւ ին խօսում, ամա գուրծ իսկի չին կատարում, ասում է մի հաստափոր թիֆլիսցի:

— Կրուտ իս ասում, աղա Արութին, պատասխանում է նրան նրա բարեկամ, հարուստ կապալառուն, մինք քիչ կու ջոկինք գալաւա, այ կու տեսնիս....

Ուրիշ տեղ խօսում են այժման քաղաքագլուխ պ. Կիպլանու մասին:

— Նա ինչ գալաւա է. վունչիլ գուրծ չի անում, ասում է մէկը:

— Արի էլի Եղգոն թումանովին ջոկինք, պատասխանում է մի ուրիշը:

Ահա հայի յատկութիւնը, քանի որ իշխան թումանովին էր քաղաքագլուխ, նրա գործունէութիւնը սաստիկ քննադատում էին, նրան իր պաշտօնի համար անյարմար և անընդունակ էին գտնում, իսկ այժմ, երբ չորս տարի անցաւ,— նրա սխալները մոռացվեցան և միայն լաւ կողմից են նայում նրա վրա: Կիպլանու հետ էլ նոյն բանն է պատահում և նոյն բանը կը պատահի ամենքի հետ.... Հէնց որ Կիպլանու տեղը մի ուրիշը ընտրված կը լինի, ամեն կողմից կը լսվեն հետեւել դատողութիւնները՝ «ափսոս», որ էլի Կիպլանին չէ. նրա պէս էլ չի գտնվի, լաւ գալաւա էր, իս ու իմ Աստուծ, խիստ լաւ էր....»

Իսկ այժմ, ի հարկէ անբաւական են, որովհետեւ նա զեռ պաշտօնի մէջն է:

Եւ այդ յատկութիւնը՝ ժամանակակիցներին ոչ թէ միայն չը գնահատել, այլ ընդհակառակն անաղապար հայոյն, անարգել՝ հայը ցոյց է տալիս իր ամեն քայլափոխում: Ով որ գործ է կատարում, ով որ պաշտօնի մէջն է, ով որ կենդանի է,—նա անպիտան է: Հէնց որ գործը կը թողնի, պաշտօնից կը հրաժարվի, կամ կը մեռնի,—ամենքը կասեն՝ «լաւ մարդ էր, խելօք մարդ էր....»

Ուրիշ կողմից պատահում է որ մի մարդուց ճշմարիտ իրաւունքով դժգոհ էին, որովհետեւ այն մարդը յայտնվեցաւ անընդունակ, ծոյլ, անգործ: Բայց եթէ այն մարդը վաղուց է որ թողել է իր պարագմունքը, տեղը, կամ գործունէութիւնը, մենք մոռանալով նրա խոյր պակասութիւնները ընդունակութիւն չունենալով քննադատութեան տակ զցել, կը աղաատել նրա արժանաւորութիւնը և պակասութիւնները,—սկսում ենք նրան գովել.... Ինչի. որովհետեւ վաղուց է որ հասարակական, գործնական կեանքից հեռացել է....

Վեր առնենք, օրինակի համար, մեր այժմեան գրականութիւնից մի քանի իրողութիւններ: Մենք ունենք, օրինակ, պ. Բարխուդարեանցի պէս գեղեցիկ թարգմանիչ—բանաստեղծ. Ով է նրա վրա անպատկանականները,—սկսում ենք նրան գովել:— ոչ ոք: Բայց նրա Շիլլերի թարգմանութիւնները, մանաւանդ «Գոն Կարլսը» այնպէս հիասթափ կերպով թարգմանված են, որ հասկացող մարդիկ ասում են թէ այդ թարգմանութեան պէս թարգմանութիւն ոչ ուստաց, ոչ անգլիական, ոչ էլ ֆրանսիական լեզուի մէջ կայ:

«Մշակը» իր եօթ տարվայ ընթացքում եթէ խոյր պակասութիւններ ունէր, երկի ունէր և

աննախանձ վիճակը—ուսումնասիրելու արդարեւ
կեանքի հետ համեմատելով

«Գուր» քրիստոնեայ տէրութեան մէջ ապրելով,
ասաց նա, բոլորովին անվախ կարող էք տանել
ձեր եկեղեցական պաշտամունքը, դուք ազատ
էք ամենայն մի բռնութենից, ամենայն մի ա-
նօրէն դատաստանից: Գուր ունիք ուսումնա-
րաններ, բարձր դպրոցներ, որտեղ ուսանում են
և բարգաւաճում են ձեր մանուկները և երիտա-
սարգները: Ձեզանում ծաղկում են արհեստները,
վաճառականութիւնը, դուք երբէք մտածած չէք
պահպանել և ապահովութեան ֆոնդ դնել ձեր
տունը, տեղը, ձեր ընտանիքը: Ղրանց պաշտ-
պանում է օրէնքը առանց ձեր աշխատութեան...
Այսպէս չէ ճանկատարում, այսպիսի վիճակի
մէջ չեն ձեր արհեստից եղբայրները, որոնք
բարբարոսների ձեռքից իրանց արհեստը ներկե-
լով եկեղեցիների դռները, հազիւ կարողանում են
պահպանել քրիստոնեական կրօնը: Ձը կայ այն-
տեղ օրէնք այն մտքով, ինչպէս դուք էք հաս-
կանում, դրա տեղը տրուում է անպայման բռն-
նութիւն, չը կան: այնտեղ այսպիսի բարեկարգ
ուսումնարաններ, այսպիսի բարձր դպրոցներ:
Ժողովուրդը թաղված է աղիտութեան խաւարի
մէջ. Ժողովուրդը պաշտպան չունի. նրա տունը,
տեղը, մինչև անգամ ընտանիքը վտանգի մէջ
են... Երևում է մեզ մաղթել Բարձրեղուց նոր
օրեր, երջանիկ օրեր հայերի համար, մնում է
մեզ անխնայ աշխատել, ճիշդ թափել բարեգեղու-
նրանց աննախանձ և թշուառ վիճակը. և դուք
ժամանէ այն բազմալիք օրը, երբ երկրային նա-
խախնամութեամբ, հայր ազատվի զարբեր (հա-
լածանքից...):»

Այս արտաբերութիւնը խոսքերը իրաւի չարժեքին
ժողովուրդը սիրում և գուցէ շատ ջերմեանով մաղ-
թանքներ բարձրացան երկրից, կատարումն խնդ-
րելով սրբազանի վերջին խօսքերին նրանաւոր
Հօրից...

Պատարագից յետոյ մի քանի անձինք այցելե-
ցին գերապատիւ սրբազանին:

Նոյնպէս ներկայացան նաեւ հայ ուսանող-
ների պատգամաւորները, որոնք՝ ողջունելով
նրա գալուստը, յայտնեցին իրանց խորին շնոր-
հակալութիւնը այն աշխատութիւնների և վաս-
տակների համար, որոնց նա յանձնառու էր
եղած հայ ազգի իրաւունքը պաշտպանելու եւրո-
պական տէրութեանց առջև:

Մօսկվայի հայ հասարակութիւնը ի պատիւ
Խորէն արքեպիսկոպոսի, որ չուտով թողնելու
էր Մօսկվայի, կամեցաւ մի փառաւոր ճաշկերպութիւն
կազմել, ստորագրվեցան 50 անձինք և ժողո-
վեցաւ մօտ 800 ընդունելի: Բայց գերապատիւ այ-
ցելուն հրաժարեցաւ այս հրաւերից, յայտնե-
ցաւ:

*) Այս հատուածը քաղած է Խորէն արքեպիս-
կոպոսի քարոզից և բերած է այստեղ հայ գրա-
կան լեզուով:

որ և է արժանաւորութիւն: Բայց դուրս են գա-
լիս մարդիկ, որոնց առանձին ուրախութիւն է
պատճառում «Մշակի» դէմ յօդուածներ գրել,
ապացուցանելով, որ բացի պակասութիւններից
«Մշակը» իր եօթ տարեկան ընթացքում ոչ մի
արժանաւորութիւն, ոչ մի լաւ կողմ չէ ունե-
ցել...

Այդ բաւական չէ որ գրում են այդ տեսակ
յօդուածներ, բայց կան մարդիկ որոնք դիմում
են խմբագրին, ամենամակալային հայտոյանքներով
լի անանու շանկներով...

Այդ կողմից պ. Գրիգոր Տէր-Մելիքեանի կեանքից
այս օրերս հրատարակված բրօշուրը աւելի ան-
կողմնապաշէ: Նա խօսելով, օրինակ, «Մը-
շակի» մասին անուանում է նրան դարպակա-
խօս, փաստերից զուրկ, գրականական գո-
ղութիւն անող և այլն և այլն.—բայց մի և
նոյն ժամանակ աւելացնում է որ «Մշակը» ու-
նի բարի ձգտումներ (զորութիւն անել և բարի
ձգտումներ ունենալ պ. Մելիքեանի կար-
ծիքով միացնել կարելի է) և կարողացաւ նուա-
ճել հին կարգապահների(2) ուղղութիւնը, (Ու-
րեմնի կերպով է որ դարգապահութեամբ կա-
րելի է նուաճել հակառակ կուսակցութիւն-
ները ուղղութիւնը):

A propos! Խօսենք այդ բրօշուրի վրա:

Այս օրերս լոյս տեսաւ մի բրօշուր հետեւեալ
վերնագրով՝ հայերէն «Մեր կովկասի (երևում է
ուրիշ կովկաս է կայ) հիմնական լրագիրներ»
կամ «Թուրքիայի, ռուսերէն» «Летучий Взглядъ,
или обзоръ современной кавказской прес-
сы», վերջապէս ֆրանսիերէն՝ «Coup d'oeil

sur la presse actuelle caucasienne.»
Բովանդակութիւնն էլ երեք լեզուով է: Պ.
Մելիքեանի կեանքի մասին թեւ չոր խել էր
(ներքէք միտքը) արժէ 15 կողմի, ուրեմն նրա
թուկոտող մտքի հայոց մասը արժէ 5 կողմի
ուսուցիչը 5 կողմի և վերջապէս ֆրանսիերէնը
5 կողմի: Առաջին մասը ստորագրված է՝ Գրիգոր
Տէր-Մելիքեանի կողմից, երկրորդը Григорій Тер-
Меліксетовъ, իսկ երրորդը Grégoire Ter-Mel-
chissédechian.

Եւ ինչ պատուական լեզու թէ հայերէն, թէ
ուսուցիչ և թէ ֆրանսիերէն: Հայերէնը երեք
բնագիրն է... և ինչ ճիշդ և ազնիւ թարգմա-
նութիւն...
Հայերէնում կարդում ենք՝ «Թէ և դրանցից
ամեն մինը (խմբագիրներ), ինչպէս տեսնում էք
(բրօշուրից բոլորովին չենք տեսնում) ունի իւր
առանձին ուղղութիւնը, բայց նրանց գրուած-
ներին նայելով, բոլորի նպատակը մէկ է. այն է.
ամենքն էլ ուղղում են չարաշուք ու ցաւագար
մարդկութեան մի էնպէս դեղ տալ որ իրկում
է ամեն տեսակ ցաւերից: Ահա էսպէս դիմակ-
ներով են ծածկված իսկապէս էդ կխախելը (?)
ու փոքր-ուղեղների (նոր բառ) մարդոց ցաւալի
ու ծիծաղելի պատկերները»

Գաւառի պատկերը շատ լաւ է...
«Չարաշուք մարդկութիւնը թարգմանված է
ֆրանսիերէն այսպէս՝ «Նորա ձգտում են առա-
ջարկել ընդհանրական միջոցներ այն ցեղե-
րին, որոնք ժամանակի ազդեցութեան տակ
փոքր առ փոքր անհետանում են»
Տեսնում էք ինչ ճիշդ թարգմանութիւն է, տես-
նում էք որ հայերէն կարելի է մի բան տեսլ,
իսկ ֆրանսիերէն բոլորովին ուրիշ բան...

Իսկ ինչ որ վերաբերում է Մօսկվայի հայ հա-
սարակութեանը—մենք հրաւիրում ենք նրան
իրագործել այն խոստումները, որ տուել է նա
գերապատիւ սրբազանին: Գրանով նա կատարած
կը լինէր մի սուրբ և նուիրական պարտք իր
ազգի առջև: Մանաւանդ որ Մօսկվայի իրեն
սկզբնապատճառ այս ազգագոյտ ձեռնարկու-
թեան—օրինակ պիտի լինի միւս հայաբնակ
քաղաքներին իր ազգասիրութեամբ և առատա-
ձեռնութեամբ:

Այս կողմից պ. Գրիգոր Տէր-Մելիքեանի կեանքից
այս օրերս հրատարակված բրօշուրը աւելի ան-
կողմնապաշէ: Նա խօսելով, օրինակ, «Մը-
շակի» մասին անուանում է նրան դարպակա-
խօս, փաստերից զուրկ, գրականական գո-
ղութիւն անող և այլն և այլն.—բայց մի և
նոյն ժամանակ աւելացնում է որ «Մշակը» ու-
նի բարի ձգտումներ (զորութիւն անել և բարի
ձգտումներ ունենալ պ. Մելիքեանի կար-
ծիքով միացնել կարելի է) և կարողացաւ նուա-
ճել հին կարգապահների(2) ուղղութիւնը, (Ու-
րեմնի կերպով է որ դարգապահութեամբ կա-
րելի է նուաճել հակառակ կուսակցութիւն-
ները ուղղութիւնը):

A propos! Խօսենք այդ բրօշուրի վրա:

Այս օրերս լոյս տեսաւ մի բրօշուր հետեւեալ
վերնագրով՝ հայերէն «Մեր կովկասի (երևում է
ուրիշ կովկաս է կայ) հիմնական լրագիրներ»
կամ «Թուրքիայի, ռուսերէն» «Летучий Взглядъ,
или обзоръ современной кавказской прес-
сы», վերջապէս ֆրանսիերէն՝ «Coup d'oeil

sur la presse actuelle caucasienne.»

Բովանդակութիւնն էլ երեք լեզուով է: Պ.
Մելիքեանի կեանքի մասին թեւ չոր խել էր
(ներքէք միտքը) արժէ 15 կողմի, ուրեմն նրա
թուկոտող մտքի հայոց մասը արժէ 5 կողմի
ուսուցիչը 5 կողմի և վերջապէս ֆրանսիերէնը
5 կողմի: Առաջին մասը ստորագրված է՝ Գրիգոր
Տէր-Մելիքեանի կողմից, երկրորդը Григорій Тер-
Меліксетовъ, իսկ երրորդը Grégoire Ter-Mel-
chissédechian.

Եւ ինչ պատուական լեզու թէ հայերէն, թէ
ուսուցիչ և թէ ֆրանսիերէն: Հայերէնը երեք
բնագիրն է... և ինչ ճիշդ և ազնիւ թարգմա-
նութիւն...
Հայերէնում կարդում ենք՝ «Թէ և դրանցից
ամեն մինը (խմբագիրներ), ինչպէս տեսնում էք
(բրօշուրից բոլորովին չենք տեսնում) ունի իւր
առանձին ուղղութիւնը, բայց նրանց գրուած-
ներին նայելով, բոլորի նպատակը մէկ է. այն է.
ամենքն էլ ուղղում են չարաշուք ու ցաւագար
մարդկութեան մի էնպէս դեղ տալ որ իրկում
է ամեն տեսակ ցաւերից: Ահա էսպէս դիմակ-
ներով են ծածկված իսկապէս էդ կխախելը (?)
ու փոքր-ուղեղների (նոր բառ) մարդոց ցաւալի
ու ծիծաղելի պատկերները»

Գաւառի պատկերը շատ լաւ է...
«Չարաշուք մարդկութիւնը թարգմանված է
ֆրանսիերէն այսպէս՝ «Նորա ձգտում են առա-
ջարկել ընդհանրական միջոցներ այն ցեղե-
րին, որոնք ժամանակի ազդեցութեան տակ
փոքր առ փոքր անհետանում են»
Տեսնում էք ինչ ճիշդ թարգմանութիւն է, տես-
նում էք որ հայերէն կարելի է մի բան տեսլ,
իսկ ֆրանսիերէն բոլորովին ուրիշ բան...

սարակութեանը—մենք հրաւիրում ենք նրան
իրագործել այն խոստումները, որ տուել է նա
գերապատիւ սրբազանին: Գրանով նա կատարած
կը լինէր մի սուրբ և նուիրական պարտք իր
ազգի առջև: Մանաւանդ որ Մօսկվայի իրեն
սկզբնապատճառ այս ազգագոյտ ձեռնարկու-
թեան—օրինակ պիտի լինի միւս հայաբնակ
քաղաքներին իր ազգասիրութեամբ և առատա-
ձեռնութեամբ:

Այս կողմից պ. Գրիգոր Տէր-Մելիքեանի կեանքից
այս օրերս հրատարակված բրօշուրը աւելի ան-
կողմնապաշէ: Նա խօսելով, օրինակ, «Մը-
շակի» մասին անուանում է նրան դարպակա-
խօս, փաստերից զուրկ, գրականական գո-
ղութիւն անող և այլն և այլն.—բայց մի և
նոյն ժամանակ աւելացնում է որ «Մշակը» ու-
նի բարի ձգտումներ (զորութիւն անել և բարի
ձգտումներ ունենալ պ. Մելիքեանի կար-
ծիքով միացնել կարելի է) և կարողացաւ նուա-
ճել հին կարգապահների(2) ուղղութիւնը, (Ու-
րեմնի կերպով է որ դարգապահութեամբ կա-
րելի է նուաճել հակառակ կուսակցութիւն-
ները ուղղութիւնը):

A propos! Խօսենք այդ բրօշուրի վրա:

Այս օրերս լոյս տեսաւ մի բրօշուր հետեւեալ
վերնագրով՝ հայերէն «Մեր կովկասի (երևում է
ուրիշ կովկաս է կայ) հիմնական լրագիրներ»
կամ «Թուրքիայի, ռուսերէն» «Летучий Взглядъ,
или обзоръ современной кавказской прес-
сы», վերջապէս ֆրանսիերէն՝ «Coup d'oeil

Գր. Խ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ լուր է հասնում, որ ԹԻՖԼԻՍԻ Հաւա-
քարի Մարիամեան ուսումնարանի տեսչի և ու-
սուցիչներից մէկի մէջ նշանաւոր անհամաձայ-
նութիւններ են եղել: Այդ անհամաձայնութիւն-
ների առիթով հոկտեմբերի 9-ին սրբազան Գա-
րեթի արքեպիսկոպոսի նախագահութեամբ և թե-
մական տեսչի ներկայութեամբ ժողով է եղել:
Ժողովը պարտաւորացրել է ուսուցչին երթարկ-
վել ուսումնարանի տեսչի կարգադրութիւննե-
րին: Մեր կարծիքով ուսուցիչը պէտք է ինքը
իմանար ուսումնարանական դիտելով այդ
առաջին կանոնը: Մենք լսեցինք նոյնպէս մի
քանի լուրեր, որոնց տպւել այժմ աւելորդ ենք
համարում հասարակութիւնը չը գայթակղեցնե-
լու համար: Խորհուրդ ենք տալիս պ. թեմական
տեսչին առանձին ուղարկութիւն դարձնել այն
ուսուցիչների վրա, որոնք օրիորդական ուսում-
նարաններում դասաւանդութիւն են անում, իսկ
Հաւաքարի Մարիամեան ուսումնարանը առան-
ձնապէս ինկատի ունենալ: Երբեք անհամա-
պայման կայծեր կան, ինչպէս մեզ պատմում են,
որոնցից կարող է հրդեհ գոյանալ: Առաջինակ
մենք ոչինչ չենք տպի և կը բաւականանանք հըս-
կելով թեմական տեսչի ուսումնարանի տեսչի
և ուսուցիչների գործունէութեան վրա:

Շնորհակալութեամբ ստացանք պ. կամար
Տէր-Գալսեանի կազմած «Русское слово» ру-
ководство для армянских училищъ, издание
второе вновь исправленное и дополненное:
Այդ դասագիրքը ընդունված է վրաստանի և
Իմլիթի հայոց բոլոր ծիական ուսումնարան-
ներում, նոյնպէս կովկասի միւս թեմերի ուսում-
նարաններից շատերում, Ձեռնարկը արժէ 40

Եւ ամբողջ թարգմանութիւնը այս ձև է...

Առհասարակ այդ բրօշուրը մեծ նշանակութիւն
կարող է ունենալ մարդկային գիտութեան այն
մի ճիւղի մէջ, այն է բժշկականութեան այն
բաժնի մէջ, որ անուանվում է պսիխատրիա
և որ պարագում է մարդու հոգեկան հիւանդու-
թիւններով: Պսիխատրիայի մասնագէտը կարող
է գիտութեան համար թանկագին հետաքոտու-
թիւններ անել այդ տարօրինակ գրուածքի մէջ:
Ձեռք նախանձում այն մարդիկներին և այն
լրագիրներին որոնց «Թուրքիայի» հեղինակը
գովել է...

Ընթերցող, ձեզ երբէք չէ պատահել գծառու-
մանը: Հէնց որ մտնում էք այդ տեսակ մի
հիմնարկութիւն, բոլոր գծերը թափվում են ձեզ
վրա և սկսում են ազդեցել զիժն եկաւ,
լիդիտան եկաւ, նայեցէք այդ խելագարին, և
այլն...

Գուր, ի հարկէ, չէք վերաբերվի, լսելով ձեր
մասին գծերի այդ տեսակ դատողութիւն: Բայց
ինչ կատէր եթէ խելագարներից մինը մտե-
նար ձեզ ու ասէր՝ դու մերն ես, դու զիժն ես,
դու խելօք ես...

Խեղճ «Тифл. Вѣстн.» լրագիրը: «Թուրքի-
այի» հեղինակը դրան գովել է... Գաւառում եմ
ես խեղճ «Тифл. Вѣстн.» լրագիր մասին:

Ես ասացի որ այս անգամ ֆելիետոնս կը լինի
անկապ մտքերից կարկատած մի յօդուած: Այն-
պէս էլ եղաւ:

Եւ խօսում էի հայոց յատկութիւնների մա-
սին և յետոյ դատողութեան զլխաւոր թելը
կորցրի: Ուրեմն վերադառնում եմ նոյն հարցին:

Կողմի վաճառվում է Թիֆլիսի կենտրոնական
գրավաճառանոցում, կարող են ստանալ նոյնպէս
աշխատասիրողից պ. Արթուրի խանութում,
Գուրամով առնողներին զիջումն կը լինի ձա-
նապարհի ծախսը գնողները վճարում են:

Մեզ գրում են Երեւանից, որ այնտեղի կոն-
սիստորիալում սարսափելի անգործունէութիւն
է տիրում: Անդամներ և նախագահը ամիսնե-
րով նիստեր չեն ունենում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

Կ. Պօլսից «Polit. Corresp.» լրագրին
գրում են հետեւեալը:

«Հոկտեմբերի 1-ին և 2-ին եղած թիւ-
քայ միստորների արտաքոյ կարգի մեծ խոր-
հուրդի մասին, որոնց ժամանակ նշանաւոր
հարցեր քննվել են, զանազան միմեանց հա-
կասող լուրեր կան տարածված: Հաւատաց-
նում են, որ խորհուրդը քննեց ուսաց զօր-
քերի վերադառնալու և նոր դատարկած եր-
կրները նորից գրաւելու հարցը: Այդ զօրքե-
րի վերադառնալու պատճառը մահմետական-
ների գործած անկարգութիւնները և քրիս-
տոնականների սպանումն է եղել: Բերայում հրա-
տարակվող լրագիրներից մէկը պատմում է, որ
Չատարջի այս կողմը 60 դիակներ են գտել և
վերադարձած գեներալ Սիբերկի հարկերնե-
րով հաշուել է մահմետականների սրից ընկած
յոյների և բոլջարների թիւը: Մի քանի տե-
ղերում գերեզմաններից հանել են ուսու զե-
նուրների դիակները և նրանց ամեն տեղ
ածել են: Անդրկայի Բեկիր-փաշա նոյնպէս
հաստատեց այդ իրողութիւնները: Քրիստո-
նեայ բնակիչները ամեն կողմից դիմում էին
գեներալ Սիբերկիին, խնդրելով վերադարձ-
նել ուսաց զօրքերին քրիստոնեաներին պաշտ-
պանելու համար մահմետականների կատաղու-
թենից: Նա մի բառալիւծ զօրք ուղարկեց Բու-
իւլեկմեջէ, իսկ ինքն մնաց Չատարջի մէջ
մի քանի բառալիւծ զօրքերով: Դեռնալը
վախենում է, որ Եւրոպայում այդ չարագոր-
ծութիւնները ուսաներին կը վերաբերեն կամ
կը հաւատացնեն, որ ուսաները եղել են

Երկար ժամանակ պտտելով հայ հասարակու-
թեան զանազան դասակարգերում, ես նկատեցի
հայերի մէջ հետեւեալ յատկութիւնը:

Երբ որ հինգ վից հայ մի տեղ միասին են հա-
ւաքվում, նրանց մտերմ խօսակցութիւնը լսե-
լով կը կարծէք որ դրանք ամենամեղմ մարդիկ
են, որ սաստիկ բարեկամ են միմեանց մէջ:
Բայց հենց որ մէկը հեռանում է խմբից, իսկոյն
մնացածները սկսում են հեռացածի դէմ խօսել,
նրան քննադատել, նրան հայտնել, նրա դէմ
բաւբասել, նրա մասնաւոր և ընտանեկան կեան-
քը արատաւորել... Հեռանում է երկրորդը՝ մնա-
ցածները սկսում են նոյնը և սորա վերաբերու-
թեամբ, մինչև որ վերջապէս մնում են երկուսը,
որոնք մնացած ընկերներին լաւ հայտնեցող յե-
տոյ, միմեանցից բաժանվում են: Բաւբասեց-
ները դադարում են միայն այն ժամանակ, երբ
ընկերներից իւրաքանչիւրը մէնակ է մնում...
Եւ նկատեցէք, որ երկու վերջին մնացած ընկեր-
ները, որոնք ուրիշների դէմ միմեանց մէջ խօ-
սում էին, պատահած ժամանակ երրորդը առջև
միմեանց դէմ էլ կը խօսեն, և այլն...

Այդ տեսակ բարք ու վարքը յիշեցնում է
աւազակներին կեանքը, որոնք ընդհանուր
ընկերակցութիւն կազմելով խաղաղ բնակիչնե-
րին սպանելու և կողոպտելու համար, մի և նոյն
ժամանակ ոչինչ չեն խնայում որ միմեանց վնա-
սեն, միմեանց կորցնեն, միմեանց խեղդեն:

Ուղարկութեան արժանի է որ այդ զգվելի յատ-
կութիւնը ունենալ թէ միայն անկրթ հայերը,
բայց և կրթված, բարձր ուսում ստացած, մե-
րն, տեղի գէշցի այլն պատկանող երիտա-
սարգները:

Շվեյցարիայի մի կանտոնի դրօշակը վրա դրած

դրանց պատճառը, մինչդեռ նորա ամեն մի-
ջոցներ դուրս են գրել քրիստոնեաներին
պաշտպանելու համար: Հոգևորական իշխան-
ները Վիսթրիլ գետի գլխավորական և պո-
լիցայի միսիստրների մոտ, որոնց համոզում
էր պաշտպանել քրիստոնեաներին: Նրա առա-
ջարկութիւնները ըստ երևոյթին անպտուղ
չը մնացին, որովհետեւ նոյն օրը երեկոյեան
Օսման-փաշա հրաւիրեց մուշկեր Ծուռ-փա-
շային և երեք զենեկաւորներ, տուեց նրանց
ձիով հրահանգներ շտապեցնել զօրքերի շար-
ժումն ուսանելիք թողնել երկիրները գրա-
ւելու համար: Թիւրքաց լրագրիւնները չը ծած-
կեցին Կ. Պոլսի շրջականերում գործված
սպանութիւնները, բայց սովորական նենգա-
ւորութեամբ պնդեցին, որ չարագործները
աւագակ բռնաբեր են եղել:

Վերջորդ հարցը, որ քննարկեալ Փոքր-Ա-
սիայի մէջ մտնելը վերանորոգութիւնների
հարցն էր, որի վերջը պ. Լայպրդ վերջին
ժամանակները եռանդով պահանջում էր:
Սեպտեմբերի 29-ին սուլթանի հետ տեսակ-
ցելու ժամանակ նա շատ հաստատ ու վճա-
ռողական կերպով խօսեց, մինչև անգամ թոյլ
տուեց իրան ասել սուլթանին, այդ վերա-
նորոգութիւնները Թիւրքիայի համար կեն-
սական խնդիրներ են և ձեր մեծութիւնը
պէտք է նրանց վրա ուշադրութիւն դարձնե-
լայնիս չարքաների առաջն առնելու հա-
մար, որոնց յետոյ ուշ կը լինի ուղղութիւն: Ման-
րամասնոր մասին խօսելով պ. Լայպրդ պա-
հանջեց երգումի նահանգապետ Փանատի-
կոս քերէր Նամայի-փաշայի հրաժարականը,
որ ոչինչ չէ անում քրիստոնեաների պաշտ-
պանութեան համար, որոնց այժմ աւելի
չարչարում են, անպատու են, կորստում են
և սպանում են: Պրանսիական զեպան պ.
Պուրնիս սուլթանի և մեծ վեզիրի հետ վեր-
ջին անգամ խօսակցելու ժամանակ պաշտպա-
նում էր Անգլիայի առաջարկած նախագիծը
Փոքր-Ասիայում վերանորոգութիւններ մտցը-
նելու համար: Նոյն օրը երեկոյեան այդ նը-
շանաւոր հարցը քննելը միսիստրների խոր-
հրդում, որին նախագահում էր մեծ վե-
զիրը: Միսիստրների մեծամասնութիւնը ձայն
տուեց պ. Լայպրդի նախագծի դէմ՝ օտար
պետութեան հսկումն Թիւրքիայի ներքին
գործերի վրա սուլթանի և նրա խորհրդա-
տուների արժանաւորութեան համար վե-

է՝ «Իւրաքանչիւրը ամենքի համար և ամենքը
իրաքանչիւրի համար»:

Իսկ հայ հասարակութեան, մասնաւոր հայ
խոտեւիզեցիայի դէպքին է՝ «Իւրաքան-
չիւրը ամենքի դէմ, և ամենքը իւրաքանչիւրի
դէմ»:

Այդպիսով հայի ամբողջ կեանքը անցնում է
պարզութեան թէ իր համար և թէ իր նմանների
համար:

Հայը իր բոլոր մտաւոր, բարոյական և նիւ-
թական ոյժերը նրա վրա է կորցնում, որ վնասէ
իր նմաններին. նա ցրվում է իր ամբողջ ըն-
դունակութիւնները ներքին երկպառակութիւն-
ների մէջ:

Հայը ոչ ինքն էլ ապրում է, և ոչ էլ ուրիշին
է ապրեցնում, ոչ ինքն է վայելում կեանքը, ոչ
էլ ուրիշին նրան վայելել է տալիս: Ոչ ինքն է
շահուում, ոչ էլ ուրիշին է շահեցնում:

Հայը ամբողջ կեանքը փողեր է դնում, բայց
ոչ ինքն է օգուտ քաղում այդ փողերից իր
կեանքի ժամանակ, ոչ էլ իր հարստութեամբ
իր նմաններին, իր ազգին պիտանի է լինում:
Հայը իր որդուն ուսում է տալիս, բայց երբ
որդին ուսում ստացաւ, ամեն միջոցներով ար-
գելում է նրան օգուտ քաղել իր ուսումից և
ուրիշներին օգուտ տալ իր ուսումով: Հայ հա-
սարակութիւնը իր զաւակներին ուսում և կրթ-
ութիւն է տալիս, բայց մի և նոյն ժամանակ
ամեն միջոցներով աշխատում է որ ուսում առած
երիտասարդութեան ստացած ուսումը ապար-
դիւն մնայ, որ երիտասարդները իրանց սովոր-
ածի համար գործադրութիւն չը գտնեն իրանց
հայրենիքում:

Դուք երեկ ծանաչում էք ժլատ և յիմար տան-

րաւորող համարելով: Մի և նոյն ժամանակ
Բ. Դրան սովորութեան համեմատ միսիստ-
րութիւնը վճռեց պատրաստել հակառակա-
դիմ և առաջարկել անգլիական կառավարու-
թեանը քննելու համար: Խորհուրդի այդ
հետեւները միւս օրը Օսման-փաշա յայտնեց
պ. Լայպրդին և խնդրեց շնորհակալութիւն
յայտնել ծովապետ Հորնբլին այն ծառայու-
թիւնների համար, որ անգլիական նաւա-
տորմը արաւ Թիւրքիային, երբ նա Կ. Պոլսի
առաջն էր կանգնած: Այդ պատասխանը պ.
Լայպրդ հեռագրով յայտնեց անգլիական կա-
ռավարութեան արտաքին գործերի միսիստ-
րութեանը և մարիկի Սալեբուրիից հրաման
ստացաւ պահպնել Բ. Դրանց որոշ պատաս-
խան անգլիական նախագծի պաշտոնապէս
և անպայման ընդունելու մասին: Սալեբուրիի
պատասխանը հոկտեմբերի 1-ին յայտնեցին
սուլթանին, որ դրա տպաւորութեան տակ
հրամայեց անյապաղ հրաւիրել իր բոլոր խոր-
հրդատուներին: Հրաւիրվածների թիւում
էր և Մուսուրուս-փաշա: Նա դեռ սեպտեմ-
բերի 30-ին կանչված էր պալատը, որտեղ
սուլթանը կամենալով Անգլիային բաւականու-
թիւն տալ, առաջարկեց նրան՝ առաջ մեծ
վեզիրի պաշտօնը, իսկ յետոյ արտաքին գոր-
ծերի միսիստրութիւնը: Խորամանկ յոյն հը-
րաժարվեց այդ պաշտօնը ընդունելուց, բաւա-
կանացաւ պ. Լայպրդի առաջարկութիւնների
պաշտպանութեամբ և խնդրեց սուլթանից
վերադառնալ իր տեղը, որովհետեւ ինքն իրան
Անգլիայից դուրս աքսորական է համարում:
Այդ պիշիւրով խորհրդի հետեւները նոյն
էր, ինչ որ առաջ: Վճիռը գրեթէ միաձայն
կայացաւ: Այդ վճիռը անկասկած վերջ կը
դնէ անգլիացիների ինքնախաբէութեանը:

Վերանորոգութիւն խորհուրդին առաջին ան-
գամ մասնակցում էր Հէյդըհիւս-փաշա: Նա
ծագումով չէրկէս է և Կ. Պոլսի փոքր ժա-
մանակ դէպք է ընդունել, յետոյ ծախված է
Տուրքիա բէյին: Սորի կողմից դա կայսերական
ընտանքի հետեւ ազգական է: Հէյդըհիւս-փա-
շա, որ բնակվել է սուլթանի ընծայած պա-
լատում, մեծ ընդունակութիւնների տէր մարդ
չէ՝ բայց խորամանկ է և ձեւեր ունի: Նրբ
սուլթանը նրանից հիացած առաջարկեց ո-
րշէլ այն միսիստրութեան պաշտօնը, որ
նա ցանկանում է ստանալ: Հէյդըհիւս-փաշա
համետութեամբ պատասխանեց. «Ես այն-

տիկներին, որոնք սրան նման վարվում են
իրանց տան տնտեսութեան մէջ: Այդ տեսակ
մի տանտիկին առնում է, օրինակ, խնձորների
մեծ պաշարը մտնող ձմեռվայ համար և չարսել
է տալիս իր առած պաշարը մի առանձին սառը
սենեակում կամ սարգափի մէջ: Անցնում են
մի քանի օրեր: Կինը գնում է իր երեխային ձեռ-
քից բռնած դարձած խնձորները նայելու համար:
Նա նկատում է որ խնձորներից մէկ երկուսը
փռել են սկսում... «Այս երկուսը վեր առ ու
կեր, սիրելիս» ասում է նա իր զաւակին:
— Մայրիկ, ասում է խնձոր երեխան (երեխա-
ները շատ անգամ աւելի խելք ունեն, քան թէ
մեծերը), ասն մի լաւ, թարմ խնձոր, լաւ չէ որ
դրան ուտեմ...
— Չէ, զաւակս, այդ խնձորը դեռ ու աղ է,
լաւ է փութը ուտես, որ ի դուր չը կորչի, իսկ
թարմի համար դեռ ժամանակ կայ:

Ներկորդ անգամ, մի քանի շաբաթից յետոյ,
այն խնձորները, որոնք առաջին օրերը դեռ լաւ
էին, այժմ սկսում են արդէն փռել...
Ի հարկէ խնայող մայրը շտապում է այդ փռ-
տած միջերը ուտել և երեխաներին ուտեցնել:
Երբեք ձեռք չը տալով ամբողջներին...
Եւ այդպիսով պատական խնձորների ահագին
պաշար ունեցող ընտանիքը ամբողջ ձմեռը միայն
փութած խնձորներ է ուտում և երբեք թարմ խն-
ձորների համը չէ տեսնում...
Այդպէս է և մեր հայոց խմբողջ կեանքը...

Մի հանճարեղ միտք ծնվեց զիտում: Նա կար-
ծում էր որ հայերը երբեք առաջ չեն գնայ մինչև
որ հայ կանուսնվեն, Հայաստանը երբեք առա-

ջան չի փորձված եմ, որ ես չեմ կարող
վարել միսիստրի պաշտօն: Նա միայն ցանկա-
նում էր ձեռ խորհուրդներ տալու իրաւունք
ստանալ: Սուլթանը մտադիր էր նրան պե-
տական խորհրդի նախագահ նշանակել,
բայց նրան սենտոսը և խորհրդատու նշա-
նակելով բաւականացաւ: Հէյդըհիւս-փաշան
իր եւրօպացի բարեկամներին միսիստրի պաշ-
տօն ընդունելը մեկնում է նրանով, որ չէր
կամենում զարթեցնել Թիւրք պետական մար-
դիկների նախանձը սուլթանի օտար երկրացի
սիրելիք դէմ: Նա յարաբերութիւններ ունի
Լայպրդի հետ և անկասկած է, որ անգլիա-
կան քաղաքականութեան գործիքներից մէկն
է: Հէյդըհիւս-փաշայի սուլթանին տուած ա-
ռաջին խորհուրդը Միդհատ-փաշային վերա-
դարձնել էր: Այդ խորհուրդը լաւ ընդունե-
վեցաւ: Հէյդըհիւս-փաշա Լայպրդի կամքի
համեմատ առաջարկել էր սուլթանին Միդ-
հատի վերադարձը, որ այժմ շատ կասկա-
ծել է: Մի քանի օր առաջ սուլթանը Միդ-
հատ-փաշայի ամուսնին ուղարկեց ձանապար-
հի ծախս Կրիտ կղզին գնալու համար, որ-
տեղ նա կը տեսնէ Միդհատի հետ:

ԱՐՏԱԲԻՆ ԼՈՒՐԵՐ

— Բուխարեստից հաղորդում են, որ այնտեղ
սպասում են Դօբրուշայի մահմետական ազգա-
բնակութեան պատգամաւորներին, որոնք պէտք
է խնդրեն իշխան Կարլին շուտով գրաւել Դօ-
բրուշա:

— Լրագրիւններին հեռագրում են որ հոկտեմբերի
1-ին բուխարական ազգային ժողովը վճռեց գրա-
ւել Դօբրուշա և կառավարութեանը մէկ մի-
լիօնի կրեդիտ բանալ անհրաժեշտ ծախսերը
ծածկելու համար:

— Բերլինից հեռագրում են, որ Թիւրքաց վեր-
ջին շրջաբերականը անտեղ շատ վատ տպա-
ւորութիւն գործեց: Յայտնի չէ թէ Կերմանիան
Թիւրքիային ինչ կը պատասխանէ:

— «Daily News» լրագրիւր հաղորդում է, որ
կոմս Դուվալով վերադարձաւ Լոնդոն:

— «Standard» լրագրիւր հաղորդում է հաստատ
աղբիւրներից, որ գնեկալ Բուսի զօրքերը ան-
ցան Ալի-Մուսլիմ ամրոցի մօտ և մտադիր են
մինչև հոկտեմբերի տասը անպատճառ գրաւել
այդ կէտը:

— Բուխարեստից հեռագրում են, որ հոկտեմ-
բերի 13-ին կը լինի զօրախաղը Դրանից յետոյ
զօրքերը կուղևորվեն իրանց նշանակած տեղերը
և կը գրաւեն Դօբրուշա:

Ջադիմութիւն չի անի մինչև որ Հայաստան
կը կանչվի:

Հայը ճիշտ, նահապետական, անշարժ ազգ է,
Հայաստանը հնադարեան, կլասիկային և ոչ բնա-
լական երկիր է...

Ամբողջ Եւրօպայի, ամբողջ լուսաւորված աշ-
խարհը ծանաչում են հայերին արմենացի ա-
նունով, Հայաստանը Արմենիա անունով...

Հին ժամանակներում հայեր կային, բայց
այժմ կան արմենացիներ, ինչպէս որ կան
գերմանացիներ, ֆրանսիացիներ, իտալացիներ,
անգլիացիներ...

Հին ժամանակներում կար Հայաստան,
բայց այժմ էլ Հայաստան չը կայ, նա կորել է
հնադարեան փոշի մէջ, անհետացել է կլասի-
կային հնութեան մէջ... Այժմ կայ բնական
մի երկիր, որ Արմենիա է անուանվում և որ
այդ անունով էլ յայտնի է ամենքին:

Գուցէ այդ պատճառով էլ հայոց խնդիրը
չաջողվեցաւ Բերլինի կօնգրէսում, որովհետեւ
իրանց հայերը դեռ այնքան ինքնաճանաչութիւն
չունեցան հայոց խնդրի տեղ՝ արմենական
խնդիրը յարուցանելու...

Ամբողջ լուսաւորված աշխարհը մեղ արմենացի
է անուանում. աշխատեց ուրեմն արժանի դառ-
նալ այդ ժամանակակից անունը: Եւրօպական
քաղաքականութիւնը, նրա դիպլոմատիան կա-
մենում էին ճիշտ Հայաստանի աւերակների վրա
կեանքի կանչել Արմենիային, — բայց այդ չաջող-
վեցաւ, որովհետեւ իրանց հայերը հայեր մնա-
ցին, և չնայած, չը կարողացան հանդիսանալ
Եւրօպայի առջև որպէս ժամանակակից արմե-
նացիներ:

— Դրինա գետի սահմաններից «Polit. Corresp.»
Լրագրին հաղորդում են, որ Նիփո-Բազարի սահ-
մանում աւստրիական զօրքերը սարսափ գցեցին
թէ բնակիչների և թէ ապստամբների վրա: Չը
նայելով, որ ապստամբները օգնութիւն էին ստա-
ցել նորա յաղթիցին: Թիւրքաց կանոնաւոր
զօրքեր և պատերազմական պաշարներ անդա-
դար հասնում են Միտրովցա: Կարծում են, որ
այդ զօրքերը նշանակված են աւստրիացիների
ընթացքին ընդդիմանալու համար:

ՄՇԱԿԻ ՀՅՈՒՄՈՐԻՏՆԵՐ

ՄԻԶԱԶԱՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆԻՑ

10.10.02, 10/22 հոկտեմբերի Միւսայից
«Daily News» լրագրին հեռագրում են, որ
պատերազմը Աֆգանիստանի հետ անփախ-
չել է էմիրի ստացված նամակի պատճա-
ռով: Որի մէջ ասված է. «Ես ուզում էք
արեք, հետեւեցե՛ք Աստուծո՛ւ ձեռքին էս
Նամակը հեռագրած է Լոնդոն, չորեքշաբթի
այնտեղից պատասխանի են սպասում, որ կը
ցոյց տայ ինչպէս վարվել»:

10.10.02, 10/22 հոկտեմբերի «Times»
լրագրին Դարձիւնից հեռագրում են, որ
պատերազմական պատրաստութիւնները շա-
րունակվում են: Զօրքերը շտապով ուղարկ-
վում են առաջին գծի վրա և կենտրոնանում
են որ Աֆգանիստան մտնող կօյնների պա-
հետ կազմեն:

Բեռլին, 10/22 հոկտեմբերի: Սօցիալիստ-
ների դէմ ուղղած օրէնքը ստորագրված է
գերմանական թագաժառանգից և հրատա-
րակված է «Reichsanzeiger» պաշտօնական
լրագրում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 հոկտեմբերի: Էգուց
սպասում են գնեկալ Դրանտիին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 հոկտեմբերի: «Прав-
датель. Вѣстн» լրագրիւր հաղորդում է, որ
գնեկալ-մայոր Չերկին նշանակված է ժան-
դարմանի չէֆի օգնական: Կենտրոն
վերստով արձակված է այդ պաշտօնից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 հոկտեմբերի: Պետա-
կան բանկի 50% տոմսակը առաջին շրջանի
արժէ 97 1/8 ռ., երկրորդ 95 5/8 ռ., երրորդ
95 ռ. 50 4., չորրորդ 95 ռ. 50 4., ներքին
50% առաջին փոխառութեան տոմսակը ար-
ժէ 234 ռ. 75 4., երկրորդ 229 ռ. 75 4.,
արեւելեան 92 ռ. 50 4., ոսկի 8 ռ. 20 4.:
Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24
պէս, ռուսաց 100 ռուբլ Կերմանիայի վրա
արժէ 205 մարկ, Փարիզի վրա 251 ֆրանկ
75 սանտիմ: Տրամադրութիւնը հանգիստ է:

Խօսելով հայոց խնդրի վրա ես ինչեցի մի շատ
զարմանալի երեւոյթ, որ նոյնպէս կարող է հայոց
խնդրի չափողվելու պատճառ համարվել:

Սան-Ստեֆանոյ դաշնագրի մէջ հայերին վե-
րաբերաւ յօդուածի թիւը 16 էր, իսկ Բերլինի
կօնգրէսի մէջ 61 թիւն էր:

Ուրեմն թաւանները միմեանց հակառակ
դասաւորելով եւրօպական դիպլոմատիան հայերի
վերաբերութեամբ գրեթէ նոյնպէս վարվեց, ինչ-
պէս Կրիտ օվի «Կլարաթէտ» առակի մէջ անփորձ
Երաժիշտն էր: Միմեանց մէջ տեղերը փո-
խելով գարծեալ ոչինչ ներդաշնակութեան չը
հասան...

Այդ առիթով բարեկամներես միւր հեղինա-
կեց հետեւեալ ոտանաւորը:

Հայի տանջանքը տեսնելով
Եւրօպան նրան ասեց՝
«Արի քեզ տամ յօդուած տասնպէս»
«Դու կը փրկվես նրանով»
Բայց հայոց ազգը անաբել
Շուտով կրկին ձայն տուեց՝
«Ինձ չէ օգնում յօդուած տասնպէս...»
— Վեր առ վաթսուս և մէկ:
Վաթսուսումէն էլ բնաւ չօգնեց
Ազգի թշուառ դրութեան:
Բայց, ինչպէս միշտ, դիպլոմատիան
Գոհ է երբ ջուր մաղեց:

Ինչ և ինչ, 16 և 61 թաւանները հայերը
պէտք է իրանց սրտի և ուղեղի մէջ արձանա-
գրեն անջնջելի տաւերով:

Արիստի

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՈՉԹԻՒՆԸ
իրանց տունը յիշեալ բնակարանի համար տալ
ցանկացողներին հրաւիրում է մինչև հոկտեմ-
բերի 5 լայտնել վարչութեանը տան վարձի մա-
սին մանրամասն պայմանները,

2-3

ՄԵՏԱՔԱՍԵԼԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԳԶԻՆ
ԹՈՂՄԱՍ ԽԱՆԴԱՄԻՐՈՎԻ (նախկին ԽԱՆԱ-
ԹՈՎ) Կ ԵՐԿՐԱԿՈՆԻՍԻՏԻՆՍԿԱՅ ԺՈՂՈՎՐԴ
ԴՊԵՐՅԱՐ ԳԵՆԵՐԱՂ Ո Ր Ո Ր Ն Ե Վ Ի տանից ՆԵՐԱՆԻՍԻ
ՀԻՄՆԱԳԱՐԱՔԻ ՊԵՐ ԽԱՐԱԶՈՎ Կ ԵՐԿՐԱՆ
ՆԿՐԱԿԱՐԱՔԻ ԿՐԵՂՈՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻԱՆ ՂԻՆՈՒԹԻԱՆ
ՍԿԻ, ՅԱՅՏԻՆԵՐՈՎ ՍՐԱ ՄԱՍԻՆ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՄԱ-
ՐԱԿՐՈՒԹԻԱՆ, ՄԻՃԱՅՈՐԱ ԽՈՐ ՆԱ ԻՐ ԱՅԵՐԽՈՒ-
ԹԻՆՆԵՐԸ չԻ ԱԿԼԱՅԵՆՑԻ ԻՄ ՄԱՊԱԳՐԻՆԻ, ՀԱՄԱ-
ՄԱՅՈՒՃ ԼԻՆԻՐՈՎ, ՈՐ ԻՆՃԱՆԻՑ ԴՍԵՐԱ ԵԿԻՃ ԱՅԿ-
ՐԱՆՔՆԵՐԸ ԼԱՎ ԵՐԿՐԱԿՈՒՆԻՍԻՆԵՐ ՈՒՆԵՆ Լ ԳՆԵՐԸ
ՀԱՄ ՆԱԽԻՐԱՐ ԵՆ:

4 — 6

4-6

МАГАЗИНЪ шелковыхъ товаровъ
ТОМАСА ХАНДАМИРОВА (бывшій
ХАЛАТОВА) перемѣщенъ съ Вельями-
новской улицы дома Хосроева на Эри-
ванскую площадь въ домъ ХАРАЗОВА,
подъ Тифлисскимъ обществомъ взаимна-
го кредита. Объявляя о семъ Тифлис-
ской публикѣ льшу себя надеждою, что
она не оставитъ своимъ посѣщеніемъ мой
магазинъ съ тою увѣренностью, что от-
пускаемые мною товары будутъ доброка-
чественные и цѣны самыя умѣренныя. —
4—6

420

ԹԻՖԼԻՍԻ Ներսիսեան հայոց դպրոցում հոգաբարձական խորհրդարանի մէջ հոկտեմբեր ամսի 18-ին, երկկոյնեան 8 ժամին, կը լինէր ածուրբ (առանց կրկնաձուրդի) կապալով տալու դպրոցին պատկանած կալուածքը, որ գտնուում է քաղաքին 2 բաժանման 12 թաղում, Սարգսյան փողոցի Պապանասեւեռի վրայ։ Պապանասեւեռի վրայ է կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բաց իրերակէից և տոներից, ցերեկային 10-ից — 12-ի մինչև։

Председатель Тифлискаго общества покровительства животнымъ доводитъ до свѣдѣнія членовъ общества и всѣхъ интересующихся дѣломъ покровительства животнымъ, что засѣданія, начиная съ октября мѣсяца сего года, назначаются каждое 5 число для правленія общества и каждое 20 число для очередныхъ общихъ собраній членовъ общества, въ 7 часовъ вечера, въ помѣщеніи канцеляріи управленія Кавказскаго Коннозаводскаго округа (домъ Читахова, на Сергіевской улицѣ).

2-3

13 Октября сего 1878 года въ день годовщины открытія Лечебницы, учрежденной Тифлисскими гражданами въ память 4-го Апрѣля 1866 года имѣть быти въ оной Молебствіе, по окончаніи Литургіи въ Каѳедральномъ Сіонскомъ Соборѣ

1—2

1-2

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է
ԿԱՄՍԱՐ ՏԵՐ-ԳԱԻԹԱՆՅԻ ՐՄԿՐՈՔ ՇԼՈ-
ԲՈ—ՍՍԶԲՆԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐԻ ՌՈՍՏԵՐԷՆ ԼԵ-
ՋՈՒ Կայ դարբնների համար, երկրորդ տպա-
գրութիւն, նորանոր յողուածներով և փոփոխու-
թիւններով լրացած: Այս գիրքը հաճութեամբ
պ. թեմական վերատեսչի ընդունված և վարա-
տանի և խմբէթի վիճակ հայոց բոլոր ծխա-
կան ուսումնարաններում: Սա ընդունված է
նոյնպէս Կովկասի և միւս թեմերի ուսումնա-
րաններէց չատերութւմ վաճառվում է Թիֆլիսու
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՋԱՌՈՒՄ
ՆՈՅՈՒՄ. կարող են ստանալ և աշխատա-
սիրողից պ. Աբովկանցների խանութում, Կոս-
կիւ կամուրջի վրա, գինւն և 40 կոպէկ: Գումար
ով առնողներին գինւնն կը լինի ճանապարհ
ծախար առնողների վրա է:

1-3

Մեր Կողմասի հիմնական լրագրող
ներք կամ թագադրման անունով նոր
դուրս եկած բաշխվող ծախվում է հատուկ
կապիկով միմյանց ձաքարայ Գրիգորյան
և Ձաքիվանի գրավածառանցներում Այլը
սանդորան ալի գրանց:

Գրիգոր Տէր Մելքիսեդեկեան

(ՀԱՆՔԻԾ), ՈՐ ԳՏԵՎՈՒՄ Է ԶԷԼՈՒԹՅԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԷՔԱ

ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԸՆ-ՇԷՆԻՆԳ

Թաթևում է Շէնհուգի ՊԱՎԻԼԻՍՈՆՈՒՄ՝ ՄԵԾ ԳԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՐՆԵՐՈՎ, ԵՐԿԱԹՈՒՂՈՒԻ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՐԹ, ԻՍԿ ՓՈԲՐ ԳԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ԳԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՐԹԷԿՈՎ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎ ԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՆՈՒՄ)

Վաճառվում են Իերլենի կենդրեւին ներկայացած հայ-պատգամաւորների լուսանկար պատկերները՝

- | | |
|--|----|
| 1. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ ՄԵՏ գիրքով (վարկէտնի) | 60 |
| 2. ԽՈՐԷՆ ՆԱՐԲԷՏ փառք գիրքով (վիզնիտնի) | 30 |
| 3. ԽՈՒՄԲ վերոյիշեալների իրանց քարտուղարներով | 60 |
- Յոտար քաղաքներից գումարով գնուցներին 50 և 25 Կ. իւրաքանչիւրր:

1-3

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎ ԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՈՒՄ

Վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը՝

- | | | | | |
|-----|---|-----------------------|-----------|------|
| 1. | Ն. Տէր-Ղևոնդեան՝ Մայրենի լեզու: | ա. տարի վեցերորդ տիպ. | | — 35 |
| 2. | » | բ. տարի չորրորդ տիպ. | | — 40 |
| 3. | » | գ. և դ. տ. երկր. տիպ. | | — 70 |
| 4. | Ղ. Աղայեանց՝ Ուսումն Մայրենի լեզուի, երրորդ տիպ. | | — 15 | |
| 5. | Տէր-Ստեփանեանի՝ Ողջունք քրիստոնեական հաւատոյ. | | — 50 | |
| 6. | Գ. արքեպ. Այվազեան՝ Նախակրթանք գրաբար լեզուի մ. ա. | հինգերորդ տիպ. | | — 40 |
| 7. | Տէր-Դավթեանց՝ РУССКОЕ СЛОВО | | — 35 | |
| 8. | Աբովեանց՝ Հայոց պատմութիւն երկրորդ տիպ. | | — 60 | |
| 9. | Հատընտիր ընթերցուածքի մատենագրայ նախնեաց հանդերձ
Ճառօթութեամբք վրէնեա թոռնեան՝ | | 4 | — |
| 10. | Թորոս Լեոնի պատմական վեպ ապգ. կենսեց | | 1 | — |
- Այս օրերս իր տասնանք վրէնեակից Առձեռն բառարաններ, Հայաստանի քարտեզներ և ռուսի որտեղիքներն աշխատութիւններն շատերը:

[illegible]